Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան 60 տարեկան է

Վստահ եմ, որ կհարատեւի

Արամ ԻՍԱԲԵԿՅԱՆ
ԵՊԳԱ ռեկտոր, պրոֆեսոր,
ՀՀ արվեստի
վաստակավոր գործիչ



Ինձ համար Ակադեմիան մի արտակարգ կառույց է: Այնպես է ստացվել, որ կյանքիս զգալի մասն անցել է այստեղ: Սկզբից՝ որպես ուսանող, հետո՝ դասախոս, պրոռեկտոր եւ 1994 թվականից՝ որպես ռեկտոր: Պետք է շնորհակալ լինեմ ճակատագրից այս իրողության եւ առաջին հերթին, այն մթնոլորտի համար, որ տիրում էր արվեստի այս կրթօջախում: Այդպես էր շնորհիվ այն հիանալի դասախոսների եւ աշխատողների, որոնք նվիրյալներն էին այս ուսումնական հաստատության:

Նույնը չէր կարելի ասել շենքային եւ նյութատեխնիկական պայմանների մասին: Մեր երազանքն էր տեսնել Ակադեմիան ավելի բարվոք վիճակում: Անհրաժեշտ եղավ անջատվել թատերական ինստիտուտից, հետո անցնել երկար տարիների կառուցողական աշխատանքի, որի ընթացքում ծեռք բերվեց երկրորդ մասնաշենքը, հիմնադրվեցին Ակադեմիայի մասնաճյուղերը Գյումրի եւ Դիլիջան քաղաքներում, կառուցվեց ցուցասրահը, ջեռուցում անցկացվեց եւ վերջապես՝ ամբողջովին վերակառուցվեց:

սատարել եւ հովանավորել են մեզ, առանձնապես ամերիկահայ բարերար **Ալբերտ Բոյաջյանին** եւ **Գագիկ Ծառուկյանին** եւ, իհարկե, ՀՀ Կառավարությանը՝ ի դեմս վարչապետ **Անդրանիկ Մարգարյանի:**

Սակայն այս ամենը առաջին հերթին իրականացվել է շնորհիվ բոլոր այն նվիրյալների, որոնք շրջապատում էին ինձ եւ Հայաստանի անկախության առաջին՝ մութ տարիներին, եւ այժմ, երբ վերելքի մեջ ենք: Ներկայումս, երբ ուսանողների թիվը եռապատկվել է, երբ արտասահմանցիներ են ձգտում սովորել մեր բուհում, երբ նորովի է սկսում շնչել Ակադեմիան, մենք առավել եւս պարտավոր ենք բարգավաճել:

Երեւանի գեղարվեստի պետա-

դական՝ նկարիչ, պրոֆեսոր **Մկրտիչ Սեդրակյան**, ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր **Սուրեն Սաֆարյան**, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ **Հենրիկ Սիրավյան**, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր **Վաղինակ Ասլանյան**, ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր **Մասիս Գրիգորյան** եւ ուրիշներ:

Ինստիտուտի այդ եւ հետագա տարիների շրջանավարտները՝ քանդակագործները, գեղանկարիչները, գրաֆիկները, իրենց լուսավոր եւ բարձր արվեստով որակական նոր թռիչք հաղորդեցին հայ ազգային մշակույթին: Այդ նրանք էին, որ կազմեցին Հայաստանի նկարիչների միության հիմնական ատաղձը:

1953-1994թթ. գեղարվեստի ինստիտուտը գործում էր թատերական ինստիտուտի հետ համատեղ: 1994-ին առանձնացվեց, իսկ 2000 թ-ից կոչվեց Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիա: 1997-ին բացվեցին ակադեմիայի Գյումրիի, իսկ 1999-ին՝ Դիլիջանի մասնաճյուղերը:

Տարիների ընթացքում, կյանքի պահանջներին համահունչ, բուհում բացվեցին նոր բաժիններ եւ մասնագիտություններ՝ գրաֆիկային, դիզայնի, արվեստաբանության, դեկորատիվ-կիրառական արվեստի, համակարգչային գեղարվեստական նախագծման:

Դիզայնի ուսուցումը սկսվեց 1964թ-ից: 42 տարվա ընթացքում բուհի շրջանավարտ դիզայներնեռոշիչների ստեղծում: Այս ճանաչողական բարդ իրավիճակն անդրադարձ ունեցավ նաեւ Գեղարվեստի ակադեմիայի գործունեության վրա, թելադրեց ուսումնական ծրագրերի ժամանակի ոգուն համապատասխան վերանայման խնդիր, որը մեծ հաջողությամբ իրականացրեցին հատկապես արվեստի պատմության եւ տեսության եւ հումանիտար առարկաների ամբիոնները:

1994թ. ռեկտոր նշանակվեց գեղանկարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր **Արամ Իսաբեկյանը:** Նրա, ինչպես նաեւ հանրապետության լավագույն արվեստագետներ, պրոֆեսորներ **Վ.Արամյանի, Ս.Կալենցի, Փ.Միրզոյանի, Ա.Գրիգորյանի, Ա.Ավետիսյանի, Է.Վարդանյանի, Գ.Գեւորգյանի, Վ.Խաչիկյանի, Ա.Կիլիկյանի, Գ.Բաղդասարյանի** եւ մյուս վաստակաշատ դասախոսների ջանքերով թարմ շունչ ու ոգի մտավ արվեստի կրթօջախ: Ձեռք բերվեց նոր մասնաշենք, բացվեցին նոր լաբորատորիաներ, արվեստանոցներ: Ակադեմիայի կյանքում հատկապես նշանակալից էր ցուցասրահի ստեղծումը, որը հնարավոր եղավ իրականացնել ամերիկահայ բարերար **Ալբերտ Բոյաջյանի** ֆինանսական աջակցությամբ: Միանգամից աշխուժացավ բուհի ստեղծագործական կյանքը: Ակադեմիային բնորոշ է ժամանակի նուրբ զգացողությունը: Դրա վառ արտահայտություններից մեկն այն է, որ հաշվի առնելով բարձր տեխնոլոշարժունակության բարձրացմանը:

Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան ունի 2 բաժին՝ կերպարվեստի, դիզայնի եւ դեկորատիվ-կիրառական արվեստի:

Ներկայումս ընդունելություն է կատարվում 8 մասնագիտությունների գծով՝ գեղանկարչություն, քանդակագործություն, գրաֆիկա, կերպարվեստի պատմություն եւ տեսություն, դիզայն, դեկորատիվ-կիրառական արվեստ (խեցեգործություն), հագուստի մոդելավորում, համակարգչային գեղարվեստական նախագծում:

ԵՊԳԱ-ի ուսանողների ընդհանուր թիվը 629 է, որից 89-ը արտասահմանցիներ են, այդ թվում՝ 73 սփյուռքահայեր: Գյումրու մասնաճյուղի ուսանողների քանակը՝ 149, Դիլիջանինը՝ 29-ը: Ակադեմիան ունի ուսուցման պետպատվերի եւ վճարովի համակարգեր:

Միայն վերջին երկու տարում Ակադեմիայի 12 ուսանողներ ստացել են միջազգային մրցույթների ոսկե, արծաթե մեդալներ եւ խրախուսական պատվոգրեր: Ակադեմիայի քանդակագործության բաժնի ուսանողներն ու շրջանավարտները վերջին տարիներին մեծ հաջողությամբ լավագույն մրցանակներ են շահել Դանթեին նվիրված՝ Ռավեննայում (Իտալիա) կայացած միջազգային բիենալեներում: Ներկայացրած բարձրարվեստ եւ ուշագրավ գործերի համար նրանք ստացել են Ֆլորենցիա քաղաքի միջազգային մրցանակը՝ դրվագամեդալը: 2005 թ.-ին Կիեւում կայա-

Ուզում եմ խորին շնարհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր այդ տարիների ընթացքում

Նկարագիր եւ տարեգրություն

Հայրենական մեծ պատերազմի ավարտից ուղիղ մեկ ամիս անց՝ 1945թ. հունիսին, Երեւանում հիմնադրվեց գեղարվեստի ինստիտուտը: Դա բացառիկ երեւույթ էր բազմադարյան հայ մշակութային կյանքում: Շնորհաշատ երիտասարդները հնարավորություն ունեցան բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալ հայրենիքում: Երեւույթը ոգեւորության անանախադեպ վերելք առաջացրեց: Բուհի կայացմանը սատարեցին Ռուսաստանի եւ Եվրոպայի գեղարվեստի ակադեմիաներում ուսում ստացած լավագույն հայ արվեստագետները, որոնք ոգեւորության հետ մեկտեղ բուհ բերեցին մասնագիտական բարձր հմտություն, գեղագիտական ճաշակ, վարպետություն, նաեւ աշխարհայացք: Նրանք մեծ ճանաչում ունեցող, չգերազանցված անհատականություններ էին՝ քանդակագործներ **Արա Սարգսյան, Սուրեն Ստեփանյան,** գեղանկարիչներ **Մարտիրոս Սարյան, Գաբրիել Գյուրջյան, Բաբկեն Քոլոզյան, Արա Բեքարյան, Էդվարդ Իսաբեկյան,** գեղանկարիչ-գրաֆիկ **Հակոբ Կոջոյան** եւ ուրիշներ:

Գեղարվեստի ինստիտուտի առաջին ռեկտոր նշանակվեց Արա Սարգսյանը (հետագայում՝ ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր), ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝ Բաբկեն Քոլոզյանը:

Դժվար է գերագնահատել բուհի կայացման ակունքներում կանգնած այս հիանալի երախտավորների կատարած հսկայական գործի պատմական նշանակությունը: Հայ կերպարվեստի հարուստ ժառանգության հիմքի վրա նրանք ստեղծեցին ժամանակի ոգուն համահունչ հիանալի ավանդույթներ, որոնք պահպանվեցին եւ կատարելագործվեցին հետագա սերունդների կողմից: Բարձր չափանիշներով մշակվեցին ուսումնական ծրագրերն ու դասավանդման մեթոդները:

1945թ. միանգամից ընդունելություն կատարվեց առաջին եւ երկրորդ կուրսերում՝ հիմք ընդունելով դիմորդների ունակություններն ու մասնագիտական տվյալները: Հետպատերազմյան ծանր տարիների դժվարությունները հաղթահարելով՝ բուհը տվեց առաջին շրջանավարտները: Նրանցից մի քանիսի անունները անգամ վկայությունն են ինստիտուտի բացառիկ նշանակության՝ ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ **Ղուկաս Չուբարյան,** ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍՀՄ պետական մրցանակների դափնեկիր **Գրիգոր Խանջյան,** ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ, ՀՀ ժողովրդական նկարիչ **Արա Հարությունյան,** գեղարվեստի ակադեմիայի թղթակից անդամ, ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր **Սարգիս Մուրադյան,** ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր **Սարգիս Բաղդասարյան,** ՀՀ ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր **Սարգիս Արուտչյան,** ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր **Վահրամ Խաչիկյան,** ՀՀ ժողովրդական ակադեմիան 60 տարեկան է: Վստահ եմ, որ այս նոր անվամբ նա կհարատեւի:

դրը ստեղծագործական բարձր նվաճումներ ունեցան եւ մեծապես խթանեցին հանրապետության արտադրության տարբեր ճյուղերի զարգացումը: Նրանց ջանքերով ստեղծվեց Հայաստանի պրոֆեսիոնալ դիզայներների միությունը:

Հագուստի մոդելավորման բաժնի շրջանավարտներն արդեն մեծ հաջողությունների են հասել ոչ միայն Հայաստանում, այլեւ արտասահմանյան տարբեր երկրներում: Նրանցից շատերը, այսօրվա պահանջներին համապատասխան, բացել են իրենց ինքնուրույն գործը եւ լուրջ քայլեր են անում այդ ոլորտում: Գեղարվեստի պետական ակադեմիայում ստացած մասնագիտական խոր գիտելիքներն ու բարձր ճաշակը անվերապահ երաշխիք են նրանց մրցունակության: Բարձր պրոֆեսիոնալիզմի, ազգային եւ համամարդկային մշակութային արժեքների հիմքի վրա ակադեմիայում ստեղծված ուսուցման առաջնակարգ համակարգը 60 տարիների ընթացքում հրաշալի եւ ակնհայտ արդյունք է տվել: Սովորականի մեջ անսովորը տեսնելու, սովորական ներկը գեղանկարչական գույն դարձնելու, սովորական կավը քանդակային կերպար դարձնելու, սովորական գիծը ծավալատարածային պատկերի վերածելու հնարքներին տիրապետելու ունակության զարգացումը ակադեմիական ուսուցման հիմնական սկզբունքն է:

80-ականների վերջերին տեղի ունեցած հասարակական-քաղաքական եւ գաղափարական տեղաշարժերի հետեւանքով փլուզվեցին խորհրդային քաղաքական համակարգը եւ այն հիմնավորող գաղափարախոսությունը: Փոխվեց նաեւ նախկին արժեքների համակարգը: Մա, անշուշտ, թելադրեց նոր աշխարհայացքային կողմնորոշումներ: Ակադեմիան 60 տարեկան է: Վստահ եմ, որ այս նոր անվամբ նա կհարատեւի:

գիաների գերակա դերը՝ Հայաստանում առաջինը Գեղարվեստի ակադեմիան 2001 թ. ընդունելություն կազմակերպեց «Համակարգչային գեղարվեստական նախագծում» մասնագիտության գծով եւ 2006թ. տվեց առաջին շրջանավարտները:

Երեւանի գեղարվեստի պետական ակադեմիան որոշակի քայլեր է անում բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումների ուղղությամբ՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության որոշումները:

2004-2005 ուսումնական տարվանից Ակադեմիան եւ նրա մասնաճյուղերն արդեն անցել են ուսուցման եռաստիճան համակարգի. բակալավրիատ՝ 4 տարվա, մագիստրատուրա՝ 2 տարվա, ասպիրանտուրա՝ 3 տարվա ուսուցման ծրագրերով: Նախագծեր են մշակվում՝ բուհում զարգացնելու ուսումնառության եւ ուսուցման շրջանակները, եվրոպական կրեդիտային համակարգի ներդրման միջոցով նպաստելու ուսանողների

ցած ԱՊՀ երկրների 3-րդ երիտասարդական «Դելփյան խաղեր» մրցույթում Ակադեմիայի ուսանողուհի **Նոնա Շիրոյանը** նվաճել է առաջին մրցանակը եւ ոսկե մեդալը: Ներկայացրած գեղանկարչական աշխատանքների համար 2006թ-ին ՀՀ նախագահի սահմանած երիտասարդական ամենահեղինակավոր մրցանակը եւ դրամական պարգեւը շահել է Ակադեմիայի գեղանկարի բաժնի ուսանող **Արթուր Հովհաննիսյանը:** Այս ցուցակը կարելի է շարունակել: Բայց այսքանն էլ բավարար է՝ պատկերացում կազմելու համար ուսուցման բարձր որակի մասին:

Ակադեմիայում աշխատող 120 դասախոսներից 81-ն ունեն գիտական աստիճաններ եւ կոչումներ: Նրանցից շատերն արժանացել են կառավարական բարձր պարգեւների, պետական մրցանակների՝ բարձր պրոֆեսիոնալիզմի եւ բարձրարվեստ գործերի համար:

Սվետլանա ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԵԳՊԱ ուսումնագիտական գծով պրոռեկտոր